ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9 (14)

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ (ՀԵՌԱՎԱՐ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ) ՆԻՍՏԻ

ք. Երևան **25 նոյեմբերի 2020թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի աշխատակարգի 18-րդ և 19-րդ կետերը, և հաշվի առնելով տեսչական մարմնում առկա հրատապ լուծում պահանջող հարցերը՝ տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) հերթական նիստը որոշվեց անցկացնել հեռավար քվեարկությամբ:

Կառավարման խորհրդի հեռավար քվեարկությունը սկսվեց 2020 թվականի նոյեմբերի 23-ին և ավարտվեց 2020 թվականի նոյեմբերի 25-ին՝ ժամը 18.00-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Կառավարման խորհրդի նախագահ՝

Վ. Դումանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ք. Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ս.Ալոյան - «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

Ա. Բախշյան - «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

Ա. Գասպարյան - «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի հանրային համագործակցության ղեկավարի պաշտոնակատար

Բացակա էր՝

Ա. Ավանեսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021թ. բյուջեի նախագծին:
2. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021թ. ստուգումների ծրագիրը:
3. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2020 թվականի 1-3-րդ եռամսյակների կատարողականի գնահատումը:
4. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2021թ. ծրագիրը:

Քվեարկության համապատասխան նյութերը ուղարկվել են կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին: Քվեարկությունը համարվեց կայացած:

Քվեարկության արդյունքում՝

1. Վ. Դումանյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
2. Ա. Ասոյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
3. Ք. Գրիգորյան 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
4. Ա. Հայրապետյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
5. Ս. Ալոյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
6. Բ. Փափազյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ,
7. Ա. Բախշյանը 1-ին, 2-րդ, և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ, իսկ 3-րդ հարցին քվեարկեց դեմ,
8. Ա. Գասպարյանը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ:

Այսպիսով, տեսչական մարմնի Կառավարման խորհրդի հեռավար նիստին մասնակցած խորհրդի 8 անդամներից 7-ը օրակարգի բոլոր 4 հարցերին քվեարկել են կողմ:

Ա.Բախշյանն օրակարգի 1-ին, 2-րդ և 4-րդ հարցերին քվեարկել է կողմ, 3-րդ հարցին՝ դեմ: Ա.Բախշյանը 3-րդ հարցի վերաբերյալ ավելի մանրամասն քննարկման անհրաժեշտություն է տեսնում:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021թ. բյուջեի նախագծին:
2. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021թ. ստուգումների ծրագիրը:
3. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2020 թվականի 1-3-րդ եռամսյակների կատարողականի գնահատումը:
4. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2021թ. ծրագիրը:

Կառավարման խորհրդի նախագահ՝

_____ **Վ. Դումանյան**

Ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝

_____ **Ա. Գևորգյան**

Ստորագրություն